

«ՊԵՏՔ Է ՋՆՋՈՒԻ՝ ԱՅԴ ԱՆՈՒՆԸ ՄԵՐ ՔԱՐՏԵԶԻՑ» - ԲՈՂՈՔԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԸ ԹՈՒՐԹ ԲԱՐԲԱՐՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉՈՒԵԼՈՒ ԴԵՄ

Posted on May 10, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Ծանօթագրեց եւ հրատարակութեան պատրաստեց՝

Դոկտ. Գեորգ Եազըճեան, Երեւան, 6 Մայիս 2020

Հայաստանի Հանրապետութեան մէջ առ այսօր գոյութիւն ունի Ալավերտի անունով քաղաքը Լոռիի մարզին մէջ: Ազգ մը իսկապէ՛ս պետք է ստրկամիտ ըլլայ, որպէսզի զինք ջարդողներու ցեղապետի մը անունով կոչուած քաղաքի մը անունը պահպանէ ...

դարեդար: Աւելին, ուղղակի անընդունելի է, որ 1990-ականներու սկիզբին երբ անուանափոխուեցան շատ բնակավայրեր Լորանկախ Հայաստանի Հանրապետութեան մէջ, այս քաղաքին ղեկավարութիւնը քաղաքը ... չանուանափոխելու յատուկ որոշում կայացուց:

Այս քաղաքին այլանդակ անունը դեռ խորհրդային շրջանին տեղիք տուած էր բազմաթիւ բողոքներու, սակայն սայլը տեղէն չէր շարժած: Գուցէ կարելի էր այդ դարաշրջանի համար գտնել կամ յօրինել «արդարացուցիչ» պատճառներ՝ Թուրքիոյ հետ խորհրդային Միութեան բարեկամութիւնը, խորհրդային Միութեան ժողովուրդներու գոյութիւն ունեցող ու անգոյ բարեկամութիւնը ատրպէյճանական գործօնը եւ այլն:

30 տարի ի՞նչը կը խանգարէ նման այլանդակ ու խայտառակ տեղանունի փոփոխութեան: ՈՉ ՄԷԿ ԲԱՆ, բացի հայկական՝ մահացու աստիճանի հասած ստրկամտութենէն կամ ... անտարբերութենէն:

Այդ բողոքագիրներէն մէկն է վարի փաստաթուղթը, որ կը պահպանուի խորհրդային Հայաստանի ղեկավար մարմիններուն հասցեագրուած նամակներու, հեռագիրներու, դիմումնագիրներու եւ բողոքագիրներու 1984-ի թղթապանակին մէջ:

Փաստաթուղթը Հայրենիքին մէջ կը հրապարակուի առաջին անգամ: Նախապէս լոյս տեսած է սփիւռքահայ մամուլին մէջ, սակայն ... ձայն բարբառոյ յանապատի: Ուղղահայեաց փակագիծերը ես անելցուցած եմ: Շարադրանքը վերածած եմ դասական ուղղագրութեան:

Յարգելի ընկ Կ. Ս. Դեմիրճեան.

«Հայկական Սովետական Հանրագիտարանի» | հատորի 139-րդ էջում
«Ալավերտի» յօդուածում գրուած է՝ «XVII դ սկզբին Շահ-Աբբասը,
տեղահանելով Գուզարքի եւ մերձաւոր գաւառների հայ եւ վրացի
բնակչութեանը, նրանց հողերը տուեց թուրք քոչուորներին, եւ Ալավերտու
շրջակայ վայրերը դարձան թուրք Բորչալու ցեղի արօտավայրերը: Ալավերտի
անուանումը մնացել է այդ ցեղապետերից մէկի՝ Ալլահվերտի մոլլա օղլի
Թարխանի անունից»:

Կարդում ենք ու զարմանում եւ զայրանում, որ մինչեւ մեր օրերը այդ
անուանումը պահպանուում է: Ինքը՝ Թարխանն էլ կզարմանար, եթէ Ալլահի

կամքով նորից յայտնուէր այս աշխարհում: Եկել են <https://keghart.org/yazichyan-alaverdi/>
կատարել գազանային բռնութիւններ եւ ... անմահացրել իրենց անունները.
Հայաստանի քաղաքներից մէկը կոչոււմ է ոմն թուրք բարբարոսի անունով:

Պետք է ջնջուի՛ այդ անունը մեր քարտեզից:

Այս մասին գրել ենք ընկ Բ. Սարկիսովին: Նրա անունից մեր կուսկոմի միջոցով
մեզ յայտնեցին, որ կզբաղուեն այդ հարցի լուծմամբ, բայց այս
մտահոգութիւնը, թէ հարցը ցանկալի ձեւով ու արագութեամբ չի լուծուի
առանց Ձեր միջամտութեան, ստիպում է դիմել Ձեզ եւ խնդրել, որ շտկէք մեր
պատմութեան կողմից թոյլ տուած 4-դարեայ այս սխալը՝ այդ քաղաքին տալով
մի արժանաւոր անուն:

Մաթեմաթիքական Մեքենաների Գ. Հ. Ի. աշխատակիցներ՝

Բ. Նարիմանեան (Վաթութիւնի 2/2, բն 6, հեռ 26-51-81)

Լ. Ղուկասեան (Քութուզովի 41-45, հեռ 26-56-12)

Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնտ 1, ցուցակ 127, գործ 414, թերթ 157:

Բնագիր: Ձեռագիր:

Ռուս զօրահրամանատարներ Նիքոլայ Վաթութիւնի եւ Միխայիլ Քութուզովի անուններով
փողոցները 1990-ականներու սկիզբին անուանափոխուած են,
համապատասխանաբար, հայկական ազատագրական շարժումի 18-րդ դարու
նուիրեալ գործիչ Յովսէփի Էմինի եւ աշխարհահռչակ Նաւթարդիւնաբերող ու բարեգործ
Գալուստ Կիւլպէնկեանի անուններով, մինչդէռ թուրք բորենի Ալլահվերտի Թարխանի
անունը քաղցկեղի բջիջի կամ պսակածեւ ժահրի նման փակած կը մնայ մեր հայրենիքի
գողտրիկ քաղաքներէն մէկուն, մինչդէռ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի այսօրուան
տարածքներուն մէջ հայկական անունները գրեթէ ամբողջովին վերացած են
պաշտօնապէս, հազուագիւտ փրկուածներն ալ յոյժ աղաւաղուած են՝ անճանաչելի
դառնալու աստիճան:

Ի՞նչ անուն տալ այս փաստին, որ երբեք չի տեղաւորուիր բանականութեան մէջ եւ
որուն շարունակումը ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԱՄՕԹ Է...

Անկախութեան երեք տասնամեակներուն կեսը կառավարութեան մէջ նախարարներ,
պետական մարմիններուն մէջ ալ զանազան չափ ու կշիռի պաշտօնեաներ ունեցած,
ինքզինք ազգայնական յայտարարող Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ինչո՞ւ
չուզեց կամ չկրցաւ վերացնել այս խայտառակութիւնը, ինչպէս նաեւ չուզեց կամ չկրցաւ
Արամ Մանուկեանի բնակած երբեմնի տան փրկումը աղբանոցի ու ... պետքարանի
վիճակէն:

Պահ մը յուսացինք, թէ այս բազմադարեայ սխալը ի վերջոյ կ'ուղղէ իր կեանքին զգալի
մասը այդ քաղաքն ընդգրկող Լոռիի մարզին մէջ անցուցած, որոշ ատեն այդ վարչական
տարածքի մարզպետի տեղակալ աշխատած, Հ. Յ. Դ. Բիւրոյի երբեմնի անդամ, 24

փետրոսար 2016-էն՝ Հ. Հ.ի տարածքային կառավարման եւ գործառնական կազմակերպչական իրաւասութեանց մէջ կը գտնուէր
Դաւիթ Լոքեանը, որու նախախարական անմիջական իրաւասութեանց մէջ կը գտնուէր
այս հարցին լուծումը: Որքան գիտեմ՝ կուսակցութիւնները իշխանութեան կը ձգտին
իրենց գաղափարախօսական դրոյթներն ու ծրագիրները իրականացնելու համար:
Ի՞նչը խանգարեց այս նախարարն ու անոր կուսակցութիւնը՝ վերացնելու այս այլանդակ
ու խայտառակ փաստը... Հո՞ւս ալ մեղաւոր են Նիկոլ Փաշինեանն ու սորոսականները...

Կարէն որդի Սերոբի Դեմիրճեան (17 ապրիլ 1932, Երեւան - 27 Հոկտեմբեր 1999,
Երեւան) - Խորհրդային Հայաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան
կուսակցական եւ պետական գործիչ: 1964-1972-ին՝ Հայաստանի Կոմկուսի Երեւանի
Քաղաքային Կոմիտէի քարտուղար, երկրորդ քարտուղար, 1972-1974-ին՝ Կենտկոմի
քարտուղար, 1974-ի նոյեմբերէն 1988-ի մայիս՝ Կենտկոմի առաջին քարտուղար, 1988-ի
յունիսէն 27 հոկտեմբեր 1999՝ Հ. Հ.ի Ազգային Ժողովի նախագահ: Սպանուեցաւ
Ազգային Ժողովի նախճիրի ընթացքին:

Շահ Աբբաս Ա. (27 յունուար 1571, Հերաթ, Ներկայիս Աֆղանիստանի մէջ - 19 յունուար
1629, Ֆարահապատի պալատ, Կասպիցի ծովեզերք, թաղուած է Քաշան քաղաքին մէջ,
Իրան) - Սեֆեւեան տոհմի հինգերորդ գահակալը: Հռչակուեցաւ օսմանցի թուրքերու
դեմ յաջող պատերազմներով, որոնց ընթացքին, 1604-ին հրահանգեց Հայաստանի
հարիւր հազարաւոր հայութեան աղետալի բռնագաղթը դէպի Պարսկաստանի
խորքերը, որու ընթացքի տասնեակ հազարաւորներ մահացան, եւ որու հետեւանքով
աւելիով պարպուեցաւ հայոց հայրենիքը իր բնիկ տարրէն ու յառաջացաւ պարսկահայ
գաղութը:

Բաբգէն Սարգիսով (25 նոյեմբեր/8 դեկտեմբեր 1913, Շուշի - 4 փետրուար 1999,
Երեւան) - Խորհրդային Հայաստանի կուսակցական եւ պետական գործիչ, 1975-1985-
ին՝ Հայկական Խ. Ս. Հ.ի Գերագոյն Խորհուրդի Նախագահութեան նախագահը:

Կուսակցական կոմիտէ:

«Գիտա-հետազօտական ինսթիթուտ» բառերուն յապաւումն է: Տուեալ հիմնարկը իր
տնօրէն՝ ակադեմիկոս Սերկէյ Մերկելեանին անունով ժողովուրդին մէջ յայտնի էր ու առ
այսօր յայտնի է «Մերկելեան ինսթիթուտ» անունով:

Փաստաթուղթին վերը, աջին կան փաստաթուղթին՝ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմ
մուտքին ռուսերէն տուեալները՝ «Н/013951, 21 դեկտ 84»:

Նոյն թղթապանակին թ. 158-ը այս նոյն բողոքագիրին լուսապատճենն է:

Թ. 156-ը այս բողոքագիրին առնչուած նշումի թերթիկ մըն է, որ ստորագրած է
Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի՝ ինճի համար ինքնութիւնը անյայտ մնացած
աշխատակիցը, հաւանաբար՝ Կենտկոմի Նամակներու Ենթաբաժինին պետը: Ան

հայերեն մակագրած է. «Ընկ Կ. Ս. Դեմիրճեանին գեկուցուել է <https://keghart.org/ya-z-chyan-alaverdi/>
մակագրութիւնը եզրակացնել կու տայ, թէ բողոքին ընթացք տալու որքէ գործնական
քայլ չէ կատարուած...

Comments



Hartunian Dr. H. – 2020-05-24 10:28:52

Ալավերդիի անուանափոխութեան շուրջ ներկայացուած խնդրագիրը առիթը տուաւ մտածելու, թէ ի՞նչ պատճառով կը շարունակենք Գումայրին *) կոչել "Գյումրի": Վստահ եմ, որ Գյումրի քաղաքը թուրքերու տիրապետութեան տակ վերածուած է " Gümürü "-ի: Ծանօթ է, որ թրքերէն լեզուն հարիւրաւոր օտար բառերու հնչումը փոխած է, օրինակի համար "օ" հնչիւնը փոխարինած "էօ" ով (ö), i, իսկ „ս“ ("ու") հնչիւնն ալ "իւ" ով: Ըստ իս, 1837 ին Ռուսերը իրենց լեզուի օրէնքով (ուր „ü“ եւ „ö“ հնչիւնները գոյութիւն չունին) պարզապէս տառադարձուցած են, „ü“ն փոխարինելով „yu“ ով: Բան մը, որ արեւելահայերս մինչեւ այսօր սովորաբար կ'ընեն: Կը գոհանամ միայն երեք օրինակներ տալով՝ Üsküdar (իւսկիւտար) Scutari (Σκουτάριον Skutàrion) , Üsküp (իւսկիւբ) Skopje, Gül (կիւլ)՝ պարսկերէն՝գոլ (վարդ), վերջիսս խուսափելու համար "կէօլ"-էն, որ կը նշանակէ լիճ: Ուստի պիտի առաջարկէի, որ ՀՀ Կառավարութիւնը այժմեայ Գյումրին փոխէ Գումրի-ի, կամ ալ վերադառնայ իր պատմական անունին՝ Գումայրի-ին: Դր. Համբարձում Յարթունեան Վիեննա *) Հ.Ս.Հանրագիտարան, 4-րդ հատոր, Երեւան 1978 Լենինական (Կումայրի, մինչեւ 1837-ը՝ Գյումրի, 1837-ից՝ Ալեքանդրապոլ, 1924-ից՝ Լենինական):